ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՀԻՇԵՑ...
ԻՍԿ ԴՈՒ ՀԻՇՈ՞ՒՄ ԵՍ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՈՒՆԴ 7

1 Եվ Տերն ասաց Նոյին. Մտի՛ր տապանի մեջ, դու և քո ամբողջ տունը, որովհետև այս դարի մեջ քեզ արդար տեսա իմ առաջ:

7 Ջրհեղեղի ջրերի պատճառով տապան մտան Նոյը և իր հետ իր որդիները, իր կինը և իր որդիների կանայք:

12 Անձրև տեղաց երկրի վրա քառասուն օր և քառասուն գիշեր: 13 Հենց նույն օրը տապան մտան Նոյը, Նոյի որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը, Նոյի կինը և նրա որդիների երեք կանայք նրանց հետ:

17 Քառասուն օր ջրհեղեղ եղավ երկրի վրա. ջրերը շատացան, տապանը վեր հանեցին, և այն բարձրացավ երկրից: 18 Ջրերը վարարեցին, սաստիկ շատացան երկրի վրա, և տապանը լողաց ջրերի երեսին: 19 Երկրի վրա ջրերն ավելի ու ավելի սաստկացան ու ծածկեցին ամբողջ երկնքի տակ գտնվող բոլոր բարձր սարերը: 20 Ջրերը տասնհինգ կանգուն վեր բարձրացան, և սարերը ծածկվեցին: 23 Եվ ջնջվեց երկրի երեսին գտնվող ամեն էակ՝ մարդուց մինչև անասունը, մինչև սողունն ու մինչև երկնքի թռչունը: Նրանք վերացան երկրի երեսից: Մնացին միայն Նոյը և իր հետ տապանում եղողները:

- *Ծննդոց 7-րդ գլուխն ավարտվում է այսպես.*

  24 Ջրերը երկրի վրա հարյուր հիսուն օր բարձրացած մնացին:

- *Սպասման օրերն ու տարիները հաճախ ամենադժվարն են:*

  Նոյն արդեն հնազանդվել էր Աստծուն, մտել տապանը, բայց դեռ պետք է սպասեր: Անձրևը դադարել էր, սակայն ջրերը դեռ երկրի վրա էին:

  Բայց հաջորդ գլուխը բացվում է հույսի խոսքով.

ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՀԻՇԵՑ ՆՈՅԻՆ...

Բայց Աստված հիշեց *Նոյին և բոլոր կենդանիներին ու բոլոր անասուններին, որ նրա հետ տապանում էին: Աստված երկրի վրա մի քամի բերեց, և ջրերը նվազեցին (Ծննդոց 8.1):*

- *«ԲԱՅՑ ԱՍՏՎԱԾ ՀԻՇԵՑ ՆՈՅԻՆ...»*

  Աստված հիշեց Աբրահամին և ազատեց Ղովտին (Ծն. 19.29)

  Աստված հիշեց Ռաքելին, լսեց նրան և բացեց նրա արգանդը (Ծն. 30.22):

  Աստված լսեց Իսրայելի հառաչանքը և հիշեց Աբրահամի, Իսահակի ու Հակոբի հետ Իր ուխտը (Ելից 2.24):

  Աննան իր ցավի մեջ աղոթեց. «Հիշի՛ր ինձ և մի՛ մոռացիր Քո աղախնին»: Տերը հիշեց նրան: Աննան հղիացավ և ծնեց Սամուելին: (Ա Թագավորաց 1.11, 19-20):

14 Բայց Սիոնն ասաց. Տերն ինձ լքել է, իմ Տերն ինձ մոռացել է: 15 Միթե կինը կմոռանա իր կաթնակեր մանկանը և չի՞ գթա իր որովայնի ծնունդին. եթե նա մոռանա իսկ, ԵՍ, սակայն, ՔԵԶ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ: 16 Ահա ես իմ ձեռքերի ափերի մեջ փորագրել եմ քեզ...(Եսայի 49.14-16):

Խաչի վրա գտնվող ավազակն ասաց.

Հիսո՛ւս, հիշի՛ր ինձ, երբ Քո թագավորությամբ գաս:

Հիսուսը պատասխանեց. Ճշմարիտ եմ ասում քեզ. այսօր Ինձ հետ դրախտում կլինես (Ղուկաս 23.42-43)

- *Ես չեմ կարծում, թե փրկությունը դժվար է: Դժվարը փրկությունից հետո հավատքով քայլելը, սպասելը, գործելն ու Աստծուն վստահելն է:*

  Մահամերձ Եզեկիան աղոթեց. «Աղաչում եմ, Տե՛ր, ՀԻՇԻ՛Ր, թե ինչպես Քո առաջ քայլեցի հավատարմությամբ և ամբողջական սրտով»: (Դ Թագ.20.1-6, Եսայի 38.1-5)

  Նեեմիա. Հիշի՛ր իմ ծառայությունը (Նեեմիա 5.19):

  Աղոթքում Դավիթը խնդրում է. ՀԻՇԻ՛Ր, Տե՛ր, Քո գթություններն ու ողորմությունները... Իմ երիտասարդության մեղքերն ու հանցանքները մի՛ հիշիր. Քո ողորմության համաձայն հիշի՛ր ինձ (Սաղմոս 25.6-7):

Ծննդոց 8.1-ը շարունակում է. Բայց Աստված հիշեց Նոյին.

*Աստված **քամի** անցկացրեց երկրի վրայով, և ջրերն սկսեցին նվազել...*

ՆՈՅԸ ՀԻՇԵՑ ԻՐԵՆ ՀԻՇՈՂ ԱՍՏԾՈՒՆ.

Փրկությանը հաջորդում է <u>երկրպագությունը</u>

Ծննդոց 8.20-ում տեսնում ենք Նոյի արձագանքը.

Տապանից դուրս գալուց հետո նա Տիրոջ համար զոհասեղան կառուցեց և ողջակեզներ մատուցեց:

- *Եկեղեցի՛, մենք հաճախ ջերմեռանդ ենք խնդրանքի մեջ: Այս հատվածը մեզ հրավիրում է նույնքան ուշադիր լինել շնորհակալության մեջ:*

  Երբ օգնությունը գալիս է, վերադառնո՞ւմ ենք Տիրոջ մոտ՝ գոհություն հայտնելու:

  Ղուկաս 17.11-19-ում Հիսուսի բժշկած տասը բորոտներից մեկը վերադարձավ՝ Աստծուն փառավորելու:

  Նոյի զոհասեղանն էլ մեզ հիշեցնում է. ստացած ողորմությունը պետք է մեզ առաջնորդի դեպի Տվողը:

  Իսկ դու հիշո՞ւմ ես:

  Այս արե՛ք Իմ հիշատակի համար (Ղուկ. 22.19):

Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր բարությունները (Սաղմոս 103.2)

Օրհնությունը ստանալուց հետո մի՛ մոռացիր Օրհնողին Երկրորդ Օրինաց 8.10–14, 18

Կուտես, կկշտանաս և կօրհնես քո Տեր Աստծուն... Զգո՛յշ եղիր, որ չմոռանաս քո Տեր Աստծուն... Հիշի՛ր քո Տեր Աստծուն:

«Բայց Աստված Նոյին հիշեց՝ ջրերի մեջ:

Իսրայելին հիշեց՝ ստրկության մեջ (Եսայի 44.21):

Աննային հիշեց՝ արցունքների մեջ:

Ռաքելին հիշեց՝ սպասման մեջ:

Եվ Իր ժողովրդին ասաց. “Ես քեզ չեմ մոռանա”:

Քեզ երբեք չեմ թողնի և բնավ չեմ լքի (Եբրայեցիներին 13.5):

Աստված անարդար չէ, որ մոռանա ձեր աշխատանքն ու սերը, որ ցուցաբերեցիք Իր անվան հանդեպ՝ սրբերին ծառայելով (Եբրայեցիներին 6.10):

- ***Հիշիր. Մարդն ընդունակ է մոռանալու...***

Աստված քեզ չի մոռացել: Իսկ դու, քո առօրյայի մեջ, հիշո՞ւմ ես Նրա խոսքը և սպասո՞ւմ ես Նրա գալստյանը:

Ինչպես Նոյի օրերն էին, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը: Ջրհեղեղից առաջ մարդիկ ուտում էին, խմում, ամուսնանում և ամուսնացնում՝ մինչև այն օրը, երբ Նոյը մտավ տապանը: Նրանք չգիտակցեցին, մինչև ջրհեղեղը եկավ և բոլորին տարավ: Այդպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը (Մատթեոս 24.37–39):

Ուտելը, խմելը և ամուսնանալն ինքնին մեղք չեն. վտանգն առօրյայի մեջ Աստծուն մոռանալն է՝ Նրա խոսքն ու գալիք դատաստանը չհիշելը:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ